Դ. ՏԱՐԻ Թիւ 931 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 10 ՓԵՏՐՈՒԱՐ 1887 — (Ն. Տ.) 22 ՓԵՏՐՈՒԱՐ 1887 — 27 ՃԵՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 1304

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ԾԽՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطەدە نورادونكیان خانندە ارەولك غزتەسی ادارەسنە

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

20 ՓԱՐԱ (ԾԽՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար տարեկան | 160 |
| » վեցամսեայ | 80 |
| » եռամսեայ | 40 |
| Գաւառաց ... տարեկան | 246 |
| ... | 120 |
| ... | 56 |
| ... | 28 |

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deirmen Ha Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 10 ՓԵՏՐՈՒԱՐ, 1887

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Առաջիկայ շաբաթ գիշեր պիտի տայ Միացեալ Ընկերութիւնն իւր տարեկան Պարահանդէս. Բարեկենդանի եղանակին շքեղագոյն հանդէսն և ամենէն զբօսալի երեկոյթը պիտի լինի այն. Աւելի օգտակար, աւելի գեղեցիկ նպատակի մը համար Պարահանդէս չէր կրնար տրուիլ. Միացեալ Ընկերութեան գործն աշխարհի առջեւ է տարիներէ հետէ. Եւ ինչ որ տեղի ունեցաւ Միաց. Ընկերութեան վերջին Պարահանդէսէն ի վեր, անշուշտ եւս քան զեւս պիտի արթարծէ հայ ազգին սէրն իւր կրթական առաջնակարգ Ընկերութեան վրայ, և պիտի քաջալերէ զինք առաւել յօժարամտութեամբ ոյժ տալու անոր արդիւնաւոր գործունէութեան. 1886 ի Բարեկենդանէն ի վեր, Միաց. Ընկերութիւնը չդադրեցաւ գործելէ. Եւ իւր աշխատութեանց դէմ ելած արտաքին արգելքները, կամ արգիլքի վտանգներն, որք այժմ վերցած կամ վերնալու ճամբուն մէջ են, ցոյց տալով այս Ընկերութեան ստացած կարեւորութիւնը՝ պիտի մղեն զմեզ ո՛չ միայն խօսքով այլ մանաւանդ գործով զօրացնելու և ապահովելու Միաց. Ընկերութեան ազգօգուտ ձեռնարկը. Զայս պարտականութիւն կուգայ բացատապէս յիշեցնել մեզ 1887ի Պարահանդէսը. Միաց. Ընկերութեան ինքնպաստ կազմակերպեալ տարեկան երեկոյթն անպատճառ պարելու հրաւէր մը չէ. Միաց. Ընկերութեան Պարահանդէսն ամեն բանէ աւելի հրաւէր մ'է տարեկան նպաստ մ'ընելու Ընկերութեան, և վստահ ենք թէ գործն այսպէս պիտի նկատեն ամեն անոնք ալ որք բարեգործական նպատակաւ հասարակային Պարահանդէս տալու դրութեան համակիր չեն.

Միաց. Ընկերութեան բարերար գործողութիւնը ծաւալելու վրայ է գաւառաց մէջ. Վերջին ժամանակներս Ընկերութիւնն ինքնին կամ աջակցութեամբ Ազգանուէր Հայուհեաց՝ բացաւ ի Բերրի աղջկանց դպրոց մը, և մանչերու դպրոցներ ի Պայազիտ, Գաբաքիլիսէ, Միխալ (Կիլիկիա), և ի Ջիգյարէթ. Կը պատրաստուի բանալ դըպրոցներ նաեւ ի Դարման, Խնձորէք և Բաղարիճ. Միաց. Ընկերութիւնը, մինչ այսպէս Ազգին կողմէ իւր տրամադրութեան ներքեւ դրուած միջոցներուն համեմատ կ'օգնէ գաւառաց բարոյական ու նիւթական ... [illegible]

... ուր թէ կեդրոնին համար աւելի ազգասէր կը դառնանք. Հայ մը որ կը դադրի համակրանօք և արգահատանօք յիշելէ իւր գաւառացի եղբայրներն ու քոյրերն որք իւր բարոյական ու նիւթական նպաստին կարօտ են կրթուելու և յառաջդիմելու համար, այնպիսի Հայ մը նաև կեդրոնին ազգային պիտոյից մասին ջերմագոյն հոգածութիւն մ'ունենալու անկարող պիտի լինի. Եթէ այսօր Միաց. Ընկերութիւնը դադրի Ազգէն նպաստ խնդրելէ, իւր 3,000 ոսկին չպիտի երթայ զօրացնել կեդր. Սնտուկը կամ կեդր. Վարժարանը. Զայդ գումար Միաց. Ընկերութեան տուող ազգայինք պիտի նային որ ուրիշ ո՛և է միջոցաւ նոյն նպաստը շարունակեն ընել գաւառներուն. Ասոր ապացոյցն այն է ... [illegible]

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

[illegible]

## ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

... վերջին բանակներուն հագուստին համար. — Բէշդ, 15. Մաճառ Կառավարութիւնն այսօր Հունգարիոյ Երեսփ. Ժողովէն խնդրեց եօթն միլիոն ֆիորին՝ պահեստի երկրորդ և վերջին բանակներուն հագուստին համար. — (Այս և սոյն կարգի վարկեր չեն պարունակուիր այն 60 միլիոն ֆիորինի վարկին մէջ, զորս աւստրո-մաճառ Կառավարութիւնը պիտի խնդրէ Պատուիրակութեանց արտաքոյ ժողովէն, աւստրո-մաճառ բանակին հասարակային ծախուց համար. Ծ. Խ.)

—ՌՈՒՍԻԱ. Լոնտոն, 16. Լուր կայ թէ Պ. Կաթկով ամեն ջանք կ'ընէ որպէս զի Իկնատիեվ զօրավար Պ. Կիրսի յաջորդէ իբրեւ արտաքին գործոց նախարար. — Լոնտոն, 17. Զօր Բաւլպարս անուանեցաւ զինուորական կցորդ Թէհրանի ռուսական դեսպանատան.

—ՏԱՓՆԱՊՆ ԱՐԵՒԵԼԻՑ. Լոնտոն, 18. Անգլ. լրագրաց վերջին յօդուածներն եւս կը ցուցնեն թէ Արեւելից վէճակն յոյժ տագնապալից երեւոյթ մը սկսած է առնուլ.

—ՌՈՒՄԱՆԻԱ. Ռումանիոյ Երեսփոխանաց Ժողովն 30 միլիոն ֆր. բուէ... [illegible]

—ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ ՌՈՒՍԻԱ. [illegible]

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

## ԺԻՒԼ ՎԵՐՆ

ԻՒՆԳ ՃԱՄԲԱՅ ՕՐԱԳԻՐԸ

[illegible]

